ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՍՐԱՀԻ ԲԱՑՈՒՄ ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

Դեկտեմբերի 2-ը հիշարժան էր Շիրակի թեմի Եկեղեցասիրաց երիտասարդների միության անդամների, ինչպես նաև առաջնորդարանում գործող տարբեր խմբակների սաների համար: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կլոր Սեղանի գրասենյակի Հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ, ինչպես նաև Գերմանական «Diakonisches Werk der EKD» կազմակերպության անմիջական աջակցությամբ ու ֆինանսական օգնությամբ առաջնորդարանում բացվեց համակարգչային սրահ, որն իր նախօրինակներն արդեն ունի Հայաստանի ներքին մի շարք թեմերում:

Բացման հանդիսությանը ներկա էին Կլոր Սեղանի Հայաստանյան գրասենյակի կոորդինատոր դոկտոր Կարեն Նազարյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, Արթիկի տարածաշրջանի հոգևոր հովիվ Տ. Սմբատ աբեղա Պողոսյանը, թեմի հոգևորականաց, սարկավագաց դասերը, սաների ծնողներ, այլ հրավիրյալներ, նաև տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը բացման խոսքում շնորհակալություն հայտնելով աջակից կազմակերպություններին՝ նշեց, որ այս ծրագիրը կյանքի են կոչել նախ մեկ համակարգչով, սակայն այսօր ունեն հինգը: Ապա հավելեց. «Սրահն իր գոյության կարճ ժամանակահատվածում կարողացել է մեկ հարկի տակ հավաքել մեծաթիվ սաների: Այստեղ գալիս են ուսանելու տարբեր տարիքի երեխաներ, մուծելով խորհրդանշական մի գումար: Ուսման տևողությունը երեք ամիս է, իսկ վերջում լավագույն սաներին տրվում են ավարտական վկայականներ»:

Սրբազան Հայրը նաև ասաց, որ ծրագրի կազմակերպիչ ու նախաձեռնող պարոն Կարեն Նազարյանն այս դասասրահին խոստացել է նվիրել դարձյալ հինգ համակարգիչ:

Կարեն Նազարյանը ևս իր խոսքում ասաց. «Այո՛, ինչպես Սրբազան Հայրը նշեց, մոտ ժամանակներս պետք է հինգ համակարգիչ ևս տրամադրվի թեմին: Մենք մշակել ենք մի նոր ծրագիր նույնպես, որն ավելի մեծ ու ընդգրկուն է, քան այս մեկը, և մոտ ապագայում դուք կունենաք ավելի մեծ սրահ՝ ավելի շատ ու ժամանակակից համակարգիչներով:

Եթե համակարգչային այս սրահ հաճախողները կարողանան սովորել, այսպես ասած, համակարգչային «այբուբենը», այսինքն՝ պարզ շարվածք կատարել, ապա նրանք կկարողանան աշխատանք գտնել և վաստակել օրվա ապրուստը»:

Այնուհետև Կ. Նազարյանը տարբեր հարցերի միջոցով փորձեց ստուգել, թե այս կարճ ժամանակահատվածում աշակերտները ինչ են հասցրել սովորել, և խոստացավ պարբերաբար այցելել առաջնորդարան՝ ստուգելու, թե ինչպես են սաները տիրապետում համակարգչային տեխնիկային: